Հայ քաղաքական կեանքի ձևաւորման ու նրա սոցիալական բովանդակութեան շուրջը եղել են մեծ տարաձայնութիւններ մեր և Հայաստանի դեկավար հոսանքի մէջ, որի հետևանքով ստեղծուել է ծանր ու դաղջ մթնոլորտ միակուռ ու միակամ գործունէութեան համար:

Բայց վտանգն այսօր սպառնում է հայ բազմատանջ դեմոկրատիայի ո՛չ միայն քաղաքական իդէալներին, այլ նաև նրա ֆիզիքական գոյութեան, և այդպիսի մոմենտում մենք պէ՛տք է մոռանանք ամէն ինչ, պէ՛տք է բովանդակագուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին և նուիրուենք միայն և միայն մի գործի՝ ճակատի պաշտպանութեան:

Մեր կեանքի այս փլուզումի օրերին իւրաքանչիւր ազնիւ գործի աշխատանքը կրկնակի արժէք ունի: Եւ այդպիսի մի մոմենտում սոցիալիստ-յեղափոխականը պէտք է գտնուի առաջին շարքերում՝ իր անկաշառ կարողութիւնները ի սպաս դնելու հայրենիքի պաշտպանութեան գործին:

Դէպի՛ ճակատ, ընկերնե՛ր:

Դէպի՛ մեր իրաւունքների ընձեռումը՝ յաղթական կռուում»:

Ռամկավարների Երևանի պաշտօնաթերթ «Հայաստանի Ձայն»ը գրում էր. «Ամբողջ հայութիւնը, առանց տատանուելու ոտքի պիտի կանգնի իր կրծքով պաշտպանելու տասնեակ հազարաւոր նահատակներու արիւնով գնուած իր հայրենիքն ու ազատութիւնը: Պիտի վճռական ու վերջնական հարուած հասցնել մեր թշնամուն ու փութացնել իր օրհասականի մէջ ջղաձգօրէն գալարուող թշնամու մահը:

Այս վախճանին հայ ժողովուրդը պիտի հասնի միայն մի ճանապարհով՝ ոյժի դէմ ոյժ հակադրելով: Ատոր համար մենք ունենք ազգային հաւաքական ոյժ, կազմակերպած բանակ: Պէտք է յոյս կտրել տրտաքին միջոցներէ և միջամտութիւններէ, պէտք է յենուիլ մեր սեփական հայ քաջարի բանակի վրա: Հայ ժողովուրդը գիտակ է իր գոյութեան սպառնացող վտանգին. պէտք է գիտակցի նոյնպէս և վստահի իր սեփական ուժին— իր հերոս բանակին:

Այս է միակ հնարաւոր ճանապարհը:

Մեր վերջնական փրկութիւնը այս ճակատագրական կռուի յաջող ելքէն կախում ունի:

Ուրեմն, յաղթութեան վստահութեամբ դէպի՛ ընդհանուր աշխատանք:

Բոլո՛ր պիտանի ուժերու հաւաքումն ու կենտրոնացում ճակատի և թիկունքի համար:

Համերաշխութիւն կուսակցական շրջաններու մէջ:

Ժողովուրդը պետութեան հետ»:

Եւ, իրօք, համերաշխութիւնը Հայաստանում և հայկական բոլոր խաւերում կատարեալ էր: Ընդհանուր յուզումի և համերաշխութեան արտայայտութիւն էր և Թիֆլիսի հոյակապ բողոք-ցոյցը հոկտ. 6-ին. «Մօտաւորապէս 10,000 հոգի, հեռագրում էր կառավարութեան Հայաստանի Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէդզադեանը, կազմած ազգարնակութեան բոլոր խաւերից՝ այր, կին, բանւորներ, համքարներ և աշակերտներ դրօշակներով և մակագրութիւններով՝ եկան կանգնեցին հայոց ներկայացուցչութեան շէնքի առջև: Հռետորների ճառերից յետոյ, ինձ յանձնեցին միտինգի որոշումը և խնդրեցին հաղորդել Հայաստանի կառավարութեան, որ միտինգի մասնակիցները բոլորն էլ պատրաստ են ոտքի կանգնելու